# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը հայտարարում է մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 2024-2025 ուսումնական տարվա ընդունելություն

Ընդունելությունը կատարվում է երկու փուլով:
1-ին փուլ՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով **ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ:** Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 5-ից հունիսի 25-ը (ներառյալ), ժամը 09:00-17:30, հարցազրույցը՝ հունիսի 28-ին:

2-րդ փուլ՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով **ուսման վարձի մասնակի փոխհատուցմամբ (վճարովի), առկա ուսուցմամբ:** Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 1-ից մինչև օգոստոսի 26-ը (ներառյալ), ժամը 09:00-17:30, հարցազրույցը՝ օգոստոսի 28-ին:

Ընդունելության դիմում-հայտը լրացվում է տեղում՝ Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնում:
**Դիմում-հայտին կցվող փաստաթղթերի ցանկը.**

- բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
- ինքնակենսագրություն,
- 3 լուսանկար (3×4 չափի),
- հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),
- զինվորական գրանցման փաստաթղթերի պատճեն բնօրինակի առկայությամբ (1-4, 16-19 էջերի պատճեն)),
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը բնօրինակի առկայությամբ,
- ստացած մրցանակների, վկայականների, դիպլոմների պատճենները՝ առկայության դեպքում,
- Ընդունելության ծառայությունների համար 5000 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը: («Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ, ք.Երևան, Ալ. Մանուկյան 11, ՀՎՀՀ 01505821, ԱյԴի Բանկ «Վարդանանց մասնաճյուղ», Հ/Հ 11817065324000

2024 թ. ՀՖԿՍՊԻ շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած) պետք է ներկայացնեն ակադեմիական տեղեկագիր՝ կնքված և ստորագրված ֆակուլտետի դեկանի կողմից, իսկ ՀՀ այլ բուհերի՝ 2024 թ. շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած)՝ տվյալ բուհի ռեկտորի ստորագրությամբ տեղեկանք՝ բակալավրիատի շրջանավարտ լինելու մասին, և ակադեմիական տեղեկագիր՝ կնքված և ստորագրված:
Արտասահմանյան բուհի դիպլոմ ներկայացնելու դեպքում դիմորդը դիպլոմի հետ պետք է ներկայացնի նաև Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից տեղեկանք՝ դիպլոմի համարժեքության մասին:

**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝**

Հեռախոս՝ +374 10 55 33 10 (164)
Էլ.հասցե՝ gayane.tamrazyan@sportedu.am